

Чирикай
21/2/1940г.
1914р.

84
8 - 85

Aug 11

1862

12 MAY 2006
«ԱՐՓԻ»-ի յանելուած 1914 թ., № 1.

19 NOV 2010
ԱՆԱՏՈԼ ԶՐԱՆՑ

84


85

Ար.

18

ԱՆԱՏՈԼ ԶՐԱՆՑ

ԼԻԼԻՏԻ ԱՂՋԻԿԸ



Թիֆլիս, Տպ. «Հանգերանտո» 1914.

06 SEP 2013

4 \$10

ՀԻԼԻՏԻ ԱԴՐԻԿ

Ես Փարիզից դուրս եկայ իրիկնամու-
տին և քաշուելով վագոնի անկիւնը, մնացի
այնպէս: Երկար ու ձմեռային անմռունչ զի-
շեր էր: Հասնելով Խ. ես ստիպուած եղայ
առժամանակ սպասել այնտեղ, տաղտկալի՛
և անցուկ ժամեր, մինչև որ կէս օրից յե-
տոյ ինձ յաջողուեց տեղ բռնել մի զիւղա-
ցու սայլակում, որը պէտք է տանէր Ար-
տիգ: Ուղերուեցինք: Ճանապարհի երկու-
կողմումն էլլեռներն ալիքաձև բաղձրանում,
իջնում էին հովիաներում, որոնց ես առաջ
տեսել էի ժպտուն, պածառափայլ արեկի
լոյսով ողողուած, իսկ այժմ նրանք ծած-
կուել էին ձիւնի թանձը սաւանով, ուր
տեղ-տեղ միայն սկին էին տաղիս խաղողի



4392-51

գալարուն որթերը: Սայլորդս երբեմնապէս
ծովորէն շտապեցնում էր պառաւած ձի-
երին, որոնք հե ի հե անցնում էին համա-
տարած լուռթեան միջով, որ մի-մի անդամ
խանդարուում էր թոչունների աղիողորմ ձի-
չերով:

Բուռն տաղտկութիւնից ստիպուած, ես
սկսեցի մտքումս աղօթք մրմնջալ. «Աս-
տուած իմ ողորմած Տէր, փրկիր ինձ վհա-
տումից, մի թող այնքան մոլորութիւններից
յետոյ գործել մի յանցանք, որին թողու-
թիւն չկայ»: Այդ ժամանակ ես տեսայ
արել, կարմիր և անճառագայթ, որպէս ցա-
նած արիւնի ծանծաղուտներ, որ երկարա-
ցած դէպի հորիզոնը, յիշեցնում էին աս-
տուածային զոհ Խաչեալին. ես վերստին հո-
գուս մէջ զգացի յոյս: Եւ ակները շարու-
նակում էին ճռճռալ ձեան վրայ: Սայլորդս
վերջապէս մտրակով ցոյց տուց ինձ Ար-
տիզի զանգակատունը, որ կորել էր թե-
թեօրեն շիկնուած մառախուղի մէջ:

— Լսեցէք, — ասաց նա, — դուք գնում
էք քահանայի տունը: Գիտէք, նա մեր կիւ-
րեն է: *)

— Գիտեմ, ծանօթ եմ նրա գործունէու-
թեան հետ. երբ ես աշակերտ էի, նա իմ
ուսուցիչն էր:

— Նա գնանական է:

— Բարեկամ, պ. կիւրէ Սաֆրակը որ-
քան գիտնական է, այնքան էլ բարեգործ:

— Մարդիկ են ասում: Նրանք դեռ ու-
րիշ բան էլ են պատմում:

— Ի՞նչ, բարեկամ:

— Թող ասեն ինչ ուզում են, իմ գոր-
ծը չէ դա:

— Իսկապէս:

— Կան այն կարծիքի մարդիկ, որ ա-
սում են, իբրև թէ պ. կիւրէն կախարդ է և
որ հմայութիւններ անել գիտէ:

— Ի՞նչ յիմարութիւն:

*) Կիւրէ — գիւղական ծխատէր քահանայ:

— ինչ վերաբերում է ինձ, ես ոչինչ
չեմ առում, բայց եթէ կիւրէն կախարդ չէ
և չի հմայում, ինչու այն ժամանակ գըր-
քեր է զլում:

Սայլակը կանգնեց քահանայի տան
տուած:

Ես թողեցի այդ ապուշին և գնալով
ծառայի մօտ, նրա ուղեկցութեամբ բարձ-
րացայ դահլիճ, որտեղ արդէն սեղան էր
բացուած: Ես տեսայ կիւրէ Սաֆրակին և
նկատեցի, որ երեք տարուայ ընթացքում,
ինչ չէի տեսել նրան, շատ էր փոխուել:
Նրա բարձր հասակը չորացել, չափաղանց
նիհարել էր, իսկ զոյտ աչքերը վառվում
էին նրա վտիտ երեսին, երկար, մեծ քիթը
կախուել էր նրա նուրբ շրթունքներին. ես
ընկայ նրա գիրկը և աղաղակեցի լացի
ձայնով:

— Հայր իմ, դալիս եմ ձեզ մօտ, որով-
հետեւ մեղանչել եմ: Հայր, իմ հին ուսու-
ցիչ, խորունկ ու խորհուրդաւոր իմաստու-

թիւնն ահաբեկեց իմ միտքը և ինչպէս դուք
հանգստացրիք հոգիս, մայրական քնքշու-
թեամբ արտայայտեցիք ձեր զգացումը աղա-
տեցէք դարձեալ ձեր զաւակին, որ կան-
գնած է անդունդի եղբին, փրկեցէք, իմ
անզուգական բարեկամ, լուսաւորեցէք ինձ,
իմ կեանքի միակ փարոս:

Նա գրկեց ինձ, ժպտաց թովիչ բարու-
թեամբ, ասես յետ տուեց իմ անցեալ պա-
տանեկութիւնը, և մի բայլ քաշուեց, կար-
ծես նրա համար, որպէսզի աւելի լաւ դի-
տէ ինձ:

— Դէհ, ներիր, — առաց նա քաղցրու-
թեամբ, ինչպէս ընդունուած էր նրա ծնըն-
դավայրում: Կիւրէ Սաֆրակը բնիկ Գարոն-
նի ափերից էր, հաչակաւոր գինու հայրե-
նիքից, որ երեսում էր նրա վեհանձն և ազ-
նիւ հոգուց:

Փիլիսոփայական փայլուն դասախոսու-
թիւնից յետոյ, որ նա կարդացել էր Բօր-
դոյում, Պուարէում և Փարիզում, վերա-

դարձել էր այս աղքատ ու ողորմելի տես-
քով գաւառը, ուր նա ծնուել էր՝ ու կամե-
ցել մեռնիլ։ Արտիգում ձեռնադրուելով
քահանայ, վեց տարուայ ընթացքում ձեռք
էր բերել ամենամեծ բարեպաշտի և բո-
լորովին բարձր գիտնականի հռչակ։

—Ներիր որդեակ իմ, —կրկնեց նա,
—դու որ գալուդ մասին նամակ գրե-
ցիր ինձ, շատ զգացուեցի, որովհետեւ այդ
ապացուցում էր որ չես մոռացել հին ու-
սուցչիդ։

Ես կամեցայ ընկնել նրա ուսները
«փրկեցէք, փրկեցէք ինձ» խօսքերով, բայց
նա արգելեց մի հրամայական և միւնոյն
ժամանակ մեղմ շարժումով։

—Առի, —խօսեց նա. —վաղը դու ինձ
կասես այն, ինչ կարող ես։ Առայժմ տա-
քանանք։ Յետոյ կճաշենք, քաղցած կլինես,
ես էլ եմ քաղցած, բայց շատ ցուրտ է։

Աղախինը դըք սեղանի վրայ ապուրի
ամանը, որից սկսեց անուշահոտ գոլորշի

բարձրանալ. դա մի պառաւ կին էր, մա-
զերը հաւաքած ու մետաքսէ կտորի մէջ,
որի կնճոռտ դէմքի գեղազարմ հետքերը
զարմանալի խառնուրդ էին նրա զառամեալ
անկանոնութեան հետ։ Ես զգացի, որ վր-
դովեցի այդ սուրբ բնակչի տան խաղաղու-
թիւնը, բայց վառարանում ձարձատող բո-
ցերի ուրախ տեսքը, որ առաջանում էին
խաղողի ճիւղերից, սպիտակ սփոոցը լց-
ուած գինու բաժակներով և կերակրների
բոյրը հետզհետէ զուարթացրին հոգիս։ Ու-
տելու ժամանակ ես համարեա մոռացայ,
որ գտնւում եմ հոգենորականի տանը ապա-
շմարութեամբ խըզճիս խայթոյցները հան-
գստացնելու համար։ Կիւրէ Սաֆրակը յի-
շեցրեց ինձ մեր մտերմութեան անցեալ
այն ժամերը մի յարկի տակ, ուր նա փի-
լիսովիայութիւն էր աւանդում։

—Առի, —ասաց նա, —դու եղել ես իմ
լաւ աշակերտ։ Քո կենդանի հասկացողու-
թիւնը միշտ գերազանցել է սւսուցիչիդ

խելքին և ահա դրա համար ես միանգամայն կապուեցի քեզ հետ։ Ես սիրում եմ քրիստոնեաների խիզախութիւնը։ Հաւատը երկչուութեամբ չպէտք է լինի, այլ պէտքէ արտայայտուել անզուսպ համարձակութեամբ։ Արդի եկեղեցիները ոչխարհներ ունեն միայն, որին առիւճներ են հարկաւոր։ Ո՞վ կտայ մեզ եկեղեցու իսկական հայրեր ու կրթուած մարդիկ, որոնք իրենց հայեացքով պարփակած լինեն ողջ գիտութիւնը։

—Պ. Սաֆրակ, մինչ այժմ դուք բոլոր հարցերին նայել էք այնքան համարձակ որշի կարելի ուրանալ։ Ես յիշում եմ որ դուք ձեր հայեացքով վախեցնում էիք նոյնիսկ ձեր այն ընկերակիցներին, որոնք ծունկ խոնարած էին ձեր կեանքի սրբութեան առաջ։ Դուք չվախեցաք նոր գիտից և աշխարհի մեծամասնութեանը համաձայնեցրիք այդ բանի հետ։

Նրա աչքերն յանկարծ բորբոքուեցին։
—Ի՞նչ կասեն երկչու մարդիկ, կար-

գալով իմ գիրքը։ Առի դու գիտես, որ ես բաւականին լաւ տիրապետում եմ երրայցերէն, արաբերէն ու պարսկերէն լեզուներին և Հնդկաստանի շատ բարբառներին։ Քեզ նոյնպէս յայտնի է որ իմ ձեռագիրների հարուստ զրադարձնը փոխադրել եմ այստեղ։ Ես խորաթափանցօրէն ուսումնամիրել եմ Արեելեան սկզբնական լեզուներն ու սովորոյթները, և Աստուծոյ օգնութեամբ այդ մեծ աշխատանքը չմնաց անարդիւնք։ Վերջացնելով «Սկզբնաւորութիւն» գիրքս, իսկոյն սրբազրեցի, պահպանելով քահանայական մեկնումը, որովհետեւ կասկածում էի թէ անխուսափելի սպասնացող ջաղջախման ենթարկեն։ Առի, Աստուծուն էլ հաճելի էր որ գիտութիւնն ու հաւատը վերջապէս միանային։ Ես դուքս այն կարծիքի եմ, որ Աստուծածաշունչը ներշնչում է Սուրբ Հոգին և քարոզում է միայն ձշարտութիւն, բայց նա չի ասում բոլորին ձըշմարտութիւն։ Եւ ինչպէս կարող է այդ աշ-

նել, երբ գիտաւորեալ կերպով նա մեզ քաշում է դէպի հոգու յաւիտենական փրկութիւնը։ Այս մեծ խնդրից դուրս, նրա համար ոչինչ գոյութիւն չունի։ Խնդրը թէպէտ հասարակ, բայց բարդ է։ Նրա մէջ ծածկուած է անկում ու փրկութիւնը և այն՝ աստուածային պատմութիւնն է մարդկութեանն, որ ամբողջ է ու սահմանափակ։ Նրա մէջ այլևս ոչինչ չի մնացել հզօր գոհացումից բացի ապարդիւն հետաքրքրութիւնը, բայց չի կարելի թոյլ տալ երկարատե լրութիւն, որ Աստծոյ գիտութիւնը սխալ հասկանան։ Ժամանակ է ասելու. «Ոչ, Աստուածաշունչը չի ստում, որովհետե բոլորը բացել է»։ Ահա իսկակտն ճշմարտութիւնը։ Երկրախօսութեան օգնութեամբ պատմական հնախօսութեան մէջ յիշատակում է որ սումերական ու խիտտերական, խալդական ու բարելրնական նախնիներից թալմուտում մնացել է սի լեզենդա, ես ևս հաստատում եմ նախնի մարդոց գո-

յութիւնը, որոնց մասին Ծննդոց գրքի հեղինակը ոչինչ չի ասում այն պատճառով, որովհետե չգիտէ նրանց գոյութիւնը Աղամի որ յարաբերութեան որդիներից է առաջ եկել։ Կասեմ աւելին. ջանասիրութեամբ ուսումնասիրելով Ծննդոց գրքի առաջին գլուխը, գտայ երկու ընթացող կեանքների գոյութիւնը, մէկը միւսից առաջացած, որ զատուած երկար դարեր ապրում են երկրագնդի մի մասում, Աղամի և նրա յետնորդների պէս։

Նա մի վայրկեան կանգ առաւ և շարունակեց ցածը ձայնով՝ հանդիսաւոր ու խորին ակնածութեամբ։

— Ես—Մարսեալ Սաֆրակս, խոնարհ քահանայ և դոքտոր աստուածաբանութեան, հնազանդ, ինչպէս լուղ երեխան, մեր սուրբ մայր եկեղեցու զօրութեամբ, լիավատահ հաստատում եմ, որ անպայման պէտք է ճանաչել մեր լուսաւորող հայր պապին ու նրա ժողովրդին և այն բոլորին, որոնք

ստեղծուած են Աստըծու կերպարանքով:
Աղամն ունէր երկու կին, որոնցից երկ-
րորդը — Եւան էր:

Այդ զարմանալի՛ բանը ինձ շփոթեց և
ես հետաքրքրուեցի, նոյն իսկ զարմանքով
զգացի ինչ որ հիասթափում, երբ կիւ-
րէ Սաֆրակն արմունկ դնելով սեղանին,
ասաց ինձ.

— Բաւական է դրա մառին: Երբեք կը-
կարդաս իմ գիրքը և կծանօթանաս բոլորի
հետ: Ես իմ պարտքը կատարել և աշխա-
տանքս ներկայացրել եմ արքեպիսկոպոսին՝
թոյլատրութիւն խնդրելու նրա բարձր գե-
րապատւութիւնից: Զեռագիրն այժմ արք-
եպիսկոպոսի մօտ է և ես ըոպէ առ ըոպէ
սպասում եմ պատասխանին, որը, ինչպէս
կարծում եմ, կպսակուի յաջողութեամբ:
Ճաշակիր սիրելի որդեակա մեր որթերի գի-
նուց և ասա ինձ, կմյ մի ուրիշ երկիր,
որի հողը սրանից աւելի ազնիւ լինի եր
յատկութեամբ:

Այդ ըոպէին մեր խօսակցութիւնն ա-
աւելի մտերմական բնոյթ ստացաւ և նա
անցաւ ընդհանուր յիշողութեան:

— Այս զաւակս, — ասաց քահանան, —
Դու իմ սիրելի աշակերտն էիր, Տէրն է
թոյլ տալիս այդպիսի գերադասութիւն,
երբ նա հիմնուած է լինում ճշմարիտ դա-
տողութեան վրայ, իսկ ես շատ շուտ գտայ,
որ քո մէջ կայ քրիստոնեայի և մարդու
առհաւատչեան: Այդ չի նշանակում որ դու
անթերի էիր, ոչ դու ջղային էիր, անհաս-
տատակամ ու գիւրագրգիռ: Քո հոգում
վառվում է մի աներեոյթ բոց և ես քո մէջ
սիրում էի մեծ յուզմունքը, ինչպէս միւս
աշակերտներիս՝ հակառակ յատկութիւնները
ես կապեցի Պոլեա դ' երվիէ միտքն ու սիր-
ալն անսահման ամրութեամբ:

Այդ անուան վրայ ես շփոթուեցի
գունատուեցի, աշխատելով զսպել սրտիս
ներքին աղմուկը, և երբ փորձեցի պատաս-
խանել, զգացի որ ոչ մի խօսք չեմ կարո-

դանում արտասանել: Քահանան չնկատեց
իմ յուզմունքը:

—Որքան ես յիշում եմ, նա քո ա-
մենալաւ ընկերն էր, —աւելացրեց նա, —
դուք մնացիք մօտիկ բարեկամներ, այնպէս
չէ: Գիտեմ, նա ընտրեց դիւանազիտական
պաշտօն և պատմում են, որ այդ ասպարի-
գում փայլուն ապագայ է խոստանում:
Յանկանում եմ որ նա աւելի ձեռնհաս լի-
նի իր գործի մէջ, և դու էլ կունենաս մի
իսկական ու անձնուէր ընկեր:

—Հայր իմ, ասացի ես մեծ դժուարու-
թեամբ, վաղը ձեզ հետ պէտք է խօսեմ Պօ-
լեա դ' էրվիէի և դարձեալ մի ուրիշի սասին:

Նա տուեց ինձ իր ձեռքը: Մենք բա-
ժանուեցինք, և ես հեռացայ ինձ համար
առանձին պատրաստուած սենեակը: Նիր-
հեցի. ինձ պատեց իտալական փանդամուշ-
կի բուրմունքը, ես տեսայ ճաճանչապատ-
կոյսերի մէջ փողփողացող գեղեցիկ կանանց,
որոնք պատել էին ինձ և յանկարծ գլխիս

վերև, ասես ամպերի միջից լսուեց մի ձայն,
«Առի, դու կարծում ես, որ նրանց սիրում
ես Աստծոյ մէջ, բայց Աստծուն ես սի-
րում նրանց մէջ»:

Հետեւեալ առաւօտ կիւրէ Սաֆրակին
տեսայ գլխավերես կանգնած:

—Առի, —ասաց նա ինձ, —գնանք պա-
տարագին, որ ասելու եմ քո գալու առ-
թիւ: Ժամասացութիւնը վերջացնելով, պատ-
րաստ կլինեմ լսելու այն, ինչ որ պէտք է
ասես ինձ:

Եկեղեցին Արտիզում փոքրիկ տաճար
է ռոմանական ոճով, շինուած է XII դա-
րում: Սրանից քսան տարի առաջ նորո-
գուելով շինուեցաւ նաև զանգակատունը:
Զնայած նա աղքատ է, սակայն նա աշխար-
հիս մէջ ունի իր առանձնայատուկ գե-
ղեցկութիւնը:

Ես տրամադրուեցի մի քանի աղօթք-
ներ ասելու: Քահանան դուրս գալով,
միասին ուղեկորուեցինք տուն: Այդտեղ մի



քիչ կաթով նախաճաշելուց յետոյ, անցանք
նրա սենեակը։ Նա առաջարկեց ինձ նըս-
տել, և ես նստեցի նրա կողքին, քարէ նս-
տարանի վրայ, ուր քանդակուած էր խա-
չեալը։ Նա նշան արաւ որ խօսեմ։ Պա-
տուհանից երևում էին տեղացող ձիւնի փա-
թիլները։ Ես սկսեցի այսպէս.

—Հայր, ահա արդէն տասը տարի է,
ինչ հեռանալով ձեզանից, մտել եմ կեանքի
մէջ։ Ես պահել եմ հաւատս, բայց աւաղ,
ոչ մաքրութեամբ։ Կարիք չկայ ձեզ պատ-
մելու իմ ամբողջ կեանքը, որովհետեւ ծանօթ
էք նրա հետ իմ հոգեւոր պետ, իմ խղճի
միակ դեկավար։ Ես կմօտենամ միայն նը-
շանաւոր դէպքերին, որ ընդմիշտ անջինջ
կմնան իմ կեանքի պատմութեան մէջ։ Ան-
ցեալ տարի մեր ընտանիքը վճռեց ամուս-
նացնել ինձ, ես սիրով համաժայնուեցայ և
նախօրօք ինձ համար ընտրած աղջիկը, ո-
րին ընտրել էին ծնողներս, շատ գեղեցիկ
էր և դուր եկաւ ինձ, այնպէս որ ես պատ-

րաստ էի նրա հետ կապուելու։ Առաջար-
կութիւնս ընդունուած էր։ Մեզ նշանեցին։
Բաղդաւոր խաղաղ ու ապահով կեանքս
թունաւորուեց, երբ կօստանդինոպոլսից
վերադարձած Պօլեա դ' էրվիից ստացայ մի
նամակ, ուր նա խիստ ցանկութիւն էր յա-
յտնում ինձ տեսնել։ Ես շտապեցի նրա մօտ
և յայտնեցի առաջիկայ հարսանիքի մասին.
Նա անկեղծօրէն շնորհաւորեց ինձ։

—Իմ վաղեմի ընկեր, —ասաց նա, —
քո բաղդաւորութեան համար անշափ ու-
րախ եմ։

Ես առանց այլևայլութեան խնդրեցի,
որ նա խաչեղբայր լինի և նա սիրով հա-
մաձայնուեց։ Հարսանիքի օրը նշանակուած
էր մայիսի 14-ին, իսկ նա իր պաշտօնա-
տեղին պէտք է վերադառնար միայն յու-
նիսի մէկին։

—Աւելի լաւ, —բացականչեցի ես, --
իսկ դռւ։

—Ե՞ս —կրկնեց նա միաժամանակ ու-

ըախ և տիսուր ժպիտով,—ես շատ եմ փոխուել... ես կնօջ համար... խելքս կորցնում եմ: Առի, ես շատ բաղդաւոր եմ և կամ շատ անբաղդ: Ինչ կանուանես այն բաղդը, որ գնել ես վատ գործով: Ես դաւաճան եմ և հարուած հասցրի իսկական բարեկամին՝ մտերմին: Այստեղ՝ կ. պօլսում ես յափշտակեցի... կիւրէ Սաֆրակն ընդհատեց.—Որդեակ իմ, ասելիքիդ մէջ ուրիշների գայթակղութեանց մասին մի իսօսիր և ոչոքի անուն մի տար:

Ես խոստացայ հնազանդուել և շարունակեցի.

—Պօլ’ը հազիւ էր այդ արտասանել, երբ նրա սենեակը մտաւ մի կին: Պարզ էր որ այդ նա էր, հազած էր երկար, երկնագոյն պէնուար, և ասես նա գտնւում էր իրենց տանը: Մի խօսքով նա ինձ վրայ խիստ տպաւորութիւն գործեց: Նա թուաց ինձ անընական: Զգում եմ, թէ այս արտայայտութիւնս ոռքան մութ կերպով է

ասում մտքումս եղածը, բայց այդ կիմանաք իմ պատմութեան վերջը և աւելի հասկանալի կդառնայ: Նրա ոսկեփայլ կայծալից աչքերը, գեղեցիկ բերանը՝ մի նուրբ շերտ էր բանում նրա մորթու մէջ և ներդաշնակ գոյներով կերտուած մարմինը օդային թերևութիւն էր տալիս կոկիկ քայլուածքներին, մի խօսքով այդ վառվուուն էակը մի ինչ-որ անսովոր փոփոխութիւն առաջացրեց իմ մէջ: Նա իմ աչքին թէ ցածր և թէ բարձր կին էր: Այս ըոպէին, հէնց որ ես նրան տեսայ, հոգիս փոթորկուեց ինչ-որ բուռն զգացմունքով:

Նկատեցի որ նրա մտնելուն պէս, Պօլ’ը կնձուց յօնքերը, բայց ճիգ գործելով, աշխատեց ժպտալ:

—Լէյիլա, ներկայացնում եմ ձեզ իմ մտերիմ ընկերոջը:

Լէյիլան պատասխանեց.

—Ես ճանաչում եմ պարոն Առիին: Այդ խօսքը շատ տարօրինակ էր, այն-

պէս որ մենք չէինք սպասում. ձայնի
տոնը նոյնպէս տարօրինակ էր:

—իմ ընկեր Առին ամուսնում է
չորս շաբաթից յետոյ— ասաց Պօլը:

Լէյիլան նայեց ինձ և նրա ոսկեփայլ
աչքերը կարծես ասում էին իչ:

Ես դուրս եկայ շատ յուզուած. ընկերս
նոյնիսկ չկամեցաւ ինձ պահել այնուեղ:
Ամբողջ օր աննպատակ փողոցներում թա-
փառելով, սրտիս մէջ զգում էի դատար-
կութիւն ու թախիծ: Երեկոյեան պատահեց
մի դէպք: Ծաղիկների խանութի առաջից
անցնելով, յիշեցի նշանածիս ու ներս մըտ-
նելով գնեցի մի փոքրիկ եղբանու ծաղիկ
և հազիւ ձեռքս առած դուրս էի եկել, երբ
մի փոքրիկ ձեռք խլեց այն ինձանից, ես
յետ դառայ ու տեսայ Լէյիլային յետ քա-
շուած ծիծաղելիս: Նա հազել էր կարճ,
մոխրագոյն շրջազգեստ, նոյնպիսի ժակետ
և փոքրիկ, կլոր զլիարկ: Ես ուզեցի ասել,
որ այդ Փարիզեան զբօսանքի զգեստը բո-

լորովին չի սազում նրա հիասքանչ գեղեց-
կութեան, և աւելի լաւ կինի եթէ ուրիշը
հագնի: Դիտելով նրան, զգացի որ սիրում
եմ անշէջ սիրով: Կամեցայ միանալ, բայց
նա անյայտացաւ կառքերի և անց ու դարձ
անող մարդկանց մէջ:

Այդ ըոպէից աւելի ես չապրեցի: Մի
քանի անգամ այցելելով Պօլին, այլևս այն-
տեղ լէյիլային չտեսայ: Նա ընկերաբար
ընդունում էր ինձ, բայց երբեք չէր խօ-
սում նրա մասին: Մենք իրաբ ոչինչ չէինք
ասում և ես միշտ տրամութեամբ թող-
նում էի նրան: Վերջին անգամ գնալով,
սպասաւորն ասաց ինձ որ. «Պարոնը տա-
նը չէ»: Բայց իսկոյն աւելացրեց «Գուցէ
գուք օրիորդին էք կամենում տեսնել»:—
Ես պատասխանեցի այն: Հայր իմ, այդ
խօսքը, այդ կարճլիկ խօսքը, որ այնքան
արիւն—արցունքի պատճտու դառաւ, հնա-
րաւոր է արդեօք քաւել: Ես գնացի: Նրան
տեսայ հիւրասենեակում բազկաթոռի վրայ

կիսով չափ պառկած, դեղին, ոսկեգոյն շորերով, որի տակից երևում էին նրա ոտները։ Ես տեսայ նրան... ոչ, նրան այլև չտեսայ։ Կոկորդս յանկարծ բռնուեց ու չըկարողացայ խօսել։ Նրա անուշ բուրմռւնքն արբեցրեց ինձ կրքով ու ցանկութեամբ և արենելքի քաղցրութիւններով բորբոքուեց ողջ էութիւնս։ Նա թուաց ինձ ոչ հասարակ հողեղէն, որ չունէր ոչ մի մարդկային արտայայտութիւն բարւոյ ու չարի. բացի քաղցը բաւականութիւնից ու հեշտասիրութիւնից, բոլորն աստուածային էին։ Անկանկած նա նկատեց իմ յուզմունքը, որովհետև հարցրեց ինձ աւելի պարզ ձայնով, քան վտակների խոխոջալը անտառում։

— Ի՞նչ է պատահել ձեզ։

Ես ընկայ նրա ոտներն ու գոչեցի արցունքի միջից։

— Ես խենթի պէս սիրում եմ ձեզ։

Նա բացեց իր գիրկը և պարզասիրտ

ու հեշտասէր աչքերով մի հայեացք գցելով ասաց ինձ։

— Ինչու դուք այդ ինձ վաղուց չէիք ասում, իմ բարեկամ։

Ի՞նչ անուն տալ այդ ժամին։ Ես գիրկս քաշեցի լէյիլային և թուաց, որ մենք տարւում ենք երկնքի վրայով, հաւասար Աստծուն. զգում էի թէ ամբողջ աշխարհն էր գեղեցիկ ու ներդաշնակ, աստղերն ու ծաղիկները, երգող գետն անտառում և ծովը կապոյտ՝ իմ գըկումն են։ Եւ ես փարւում էի նրանց անվերջ համբոյրներով։

Դրա վրայ կիւրէ Սաֆրակը, որ լսում էր մինչև վերջին ըոպէն նկատելի անհամբերութեամբ, վերկացաւ տեղից և մօտենալով վառարանին տաքանալու համար կապայի փէշերը մինչև ծունկերը քաշելով, խստութեամբ ու զսպուած արհամարհանքով նկատեց։

— Դու, թշուառ աստուածահայհոյի՛ փոխանակ զղջալու, առանձին հպարտու-

թեամբ պատմելով ուզում ես բաւականութիւն զգալ: Ես ալես քեզ չեմ լսում:

Այդ խօսքերից ես արտասուեցի և նրանից ներողութիւն խնդրեցի: Տեսնելով որ զղջում եմ անկեղծօրէն, նա թոյլ տուեց ինձ խոստովանանքս շարունակելու:

Ես շարունակեցի պատմութիւնս, աշխատելով կարելոյն չափ կրճատել:

—Հայր իմ, ես թողեցի Լէյիլային լի զղջումով, բայց միւս օրը նա յայտնուեց ինձ մօտ և այդ օրուանից սկսուեց կեանքիս վայելքի ծանր խոռվութիւնը: Ես խանդով նայեցի Պոլի վրայ, որին ես խաբել ու անողորմաբար մորմոքել էի: Զկայ աւելի քան վատ զգացմունք, քան խանդը: Լէյիլան նոյնիսկ չէր արժանացնում ինձ իր կեղծ սիրոյն, որպէսզի թեթևացնէր իմ տանջանքը: Նրա բարքն այդ ժամանակ անհասկանալի էր. դրա մասին չեմ խօսելու, որովհետեւ կվիրաւորեմ ձեր քահանայական զգացմունքը, այլ կասեմ միայն, որ Լէյի-

լան թւում էր հեռու այն սիրուց, որ նուիրել էր ինձ: Թէպէտ նա ինձ վրայ թափել էր իր հոգու թոյնը, բայց ես անկարող էի առանց նրան ապրել և վախենում էի կորցնել նրան: Լէյիլան բոլորովին զըրկուած էր այն բանից, որին մենք անուանում ենք ռարոյական զգացմունք: Դրանով չէր կարելի ասել, որ նա չար էր ու անգութ, ընդհակառակը, նա հեզ ու շատ ողորմած էր: Նրան խենթ անուանել չէր կարելի, որովհետեւ նրա զիտակցութիւնն ուրիշ կարգի էր պատկանում: Խօսում էր սակաւ և մերժում էր պատասխանել այն հարցերին, որ անցեալին էին վերաբերում: Նա չզիտէր այն, ինչ մենք զիտենք, և ընդհակառակը, նա շատ բան զիտէր, որ մեզնից անյայտէ: Դաստիարակուելով Արևելքում, նա ծանօթ էր բոլոր հնդկական ու պարսկական լեգենդաներին, որ ինձ պատմում էր շարունակ և միակերպ ձայնով: Նա պատմում էր աշխարհաստեղծութեան լուսազարդ

շալոյսի մասին, որպէս մի պարանի, որի
համար մի անգամ իրեն ասացի. նա պա-
տասխանեց խորհրդաւոր՝ կերպով:

—Ես հասակաւոր եմ: Այդ ճիշտէ:

Կիւրէ Սաֆրակը դեռ կանգնած էր վա-
ռարանի առաջ մի քիչ դէպի առաջ ծռու-
ած և մեխուած ուշաղրութեամբ լսում ինձ:

—Շարունակիր, —արտասանեց նա:

—Մի քանի անգամ, հայր իմ, ես լէյի-
լային հարցը նրա կրօնի մասին: Նա պա-
տասխանեց որ ինքը կրօն չունի և կարիք
էլ չի զգում, որ իր քոյրն ու մայրը
Աստծոյ աղջիկներն էին, բայց դարձեալ
կապուած չէին նրա հետ ոչ մի պաշտա-
մունքով: Նա իր զզին կրում էր մի մեղա-
լիօն, որի մէջ կար հասարակ հող մի պտղունց
որ իր ասելով նա պահում էր այն իր մօրը
սիրուց:

Հազիւ էի այդ խօսքերն արտասանել,
երբ կիւրէ Սաֆրակը գունատ ու դողդոջ

ցատկեց իր տեղում, և բռնելով թևս, ինձ
վրայ յենուած աղաղակեց.

—Նա ճիշտ է ասել: Ես գիտեմ, գի-
տեմ այժմ թէ ով է նա եղել: Առի, բնազդը
քեզ չի խաբել: Սակայն շարունակիր. շա-
րունակիր, խնդրումեմ քեզ:

—Հայր իմ, ես իմ պատմութիւնը վեր-
ջացրի: Ափսոս: Լէյիլայի սիրուց ես թողի
նշանածիս և դաւաճանեցի ամենալաւ ընկե-
րին: Ես անպատուեցի Աստուծուն: Պոլը
լսելով լէյիլայի դաւաճանութիւնը, սպառ-
նաց նրան սպանել, բայց նէ հեզութեամբ
պատասխանում էր նրան.

—Փորձեցէք, բարեկամս: Ես մեռ-
նել ուզում եմ, բայց չեմ կարողանում:

—Վեց ամսուայ ընթացքում անձնա-
տուր լինելով ինձ, մի առաւօտ նա յայտ-
նեց, որ վերագանում է Պարսկաստան և
որ մենք այլևս չենք տեսնելու միմեանց:
Ես լաց եղայ, բողոքեցի և ասացի, որ,

դու երբէք չես սիրել ինձ,—բայց նա պատասխանեց քնքօրէն.

—Ոչ, բարեկամս: Ոչ մի կին ձեզ սիրած չի լինի այնքան, որքան ես եմ սիրել, և ոչ ոք այն բաւականութիւնը տուած չի լինի ձեզ, որ ես եմ պատճառել: Դուք դարձեալ երախտապարտ պէտք է լինէք ինձ: Մնաք բարեաւ:

Երկու օր բթացած ու խելագարի պէս մնացի, յետոյ զգալով, որ իմ հոգու փրկութիւնը ձեզ մօտ կարող եմ գտնել, եկայ այստեղ: Դէհ, մաքրեցէք, ախտահանեցէք ու զօրացրէք սիրտս՝ հայր: Ես դարձեալ սիրում եմ նրան:

Ես լռեցի: Կիւրէ Սաֆրակը սկսեց մըտածել, ապա ազատելով իր գլուխը ձեռքերից, ընդհատեց լոռութիւնը:

—Որդեակ իմ, քո պատմաւթիւնը հաստատում է իմ մեծ զիւտը: Լսիր ինձ: Մենք այժմ ապրում ենք հրաշքների մէջ, ինչպէս Աստծոյ ստեղծուած նախամարդիկը:

Հաւ լսիր, Աղամը, ինչպէս ասացի, ունէր երկու կին, որոնցից առաջինին Աստուածաշունչը չի յիշատակում, բայց նրա գոյութիւնը մեզ յայտնի է Թալմուդից, նրան անուանում էին Լիլիտ. Նա Աղամի կողքից չէր ստեղծուած, այլ կարմիր կաւից, որից և Աղամն էր առաջ եկել և միատեսակ մի ծնունդ չէր ու կամաւոր կերպով հեռացաւ Աղամից գնաց այն երկիրը, որտեղ ապրում էին պարսիկները՝ այնտեղ, ուր տարիներ շարունակ ապրում էին նախադամ-որդիք, որոնք աւելի իմաստուն էին քան սովորական մարդիկ: Այդպիսով նա մասնակից չէր մեր նախածնողի անկման պատճառներին և նախնական մեղքից հասած չարիքները շախտոտեցին նրան:

Ուրեմն և նա խոյս տուեց Եւային, և նրա սեռունդին հասած անէծքից: Նա չի մեռնում և չի տանջւում, նա հոգի չունի, որին ազատելու կարիք զգացուէր, ուստի և նա ոչ լաւ և ոչ վատ վարուել չի կարող: Ինչ

ու ենթադրութիւններով, որ կշտամբում է աստուածքանութեանը։ Սակայն նա չի կարողանում հաստատել իր այդ յերիւրանքները։ Ահա թէ ինչ է ինձ զրում։ Բայց ես կառեմ բոլորը արքեպիսկոպոսին, կապացուցեմ որ Լիլիա գոյութիւն ունի և ես չեմ ստում։ Ես խնդրեցի կիւրէ Սաֆրակին դարձեալ մի քանի խօսք լսելու։

— Լէյիլան, հայր իմ, իր հրաժեշտի ժամանակ մօտս թողեց կիպարիսի մի տերեւ, որի վրայ սուր դանակով փորուած են ինձ անհասկանալի տառեր։ Ահա այս թալիսման է այդ։

Կիւրէ Սաֆրակը վերցրեց ուշադրութեամբ նայեց և ապա ասաց.

— Սա գրուած է հին-պարսկական լեզուով և թարգմանւում է այսպէս.

Լիլիթի Աղջիկ ԼէՅԻԼԱՅԻ ԱՂՕԹՔԸ

«Տէր, խոստացիր ինձ մահ, որպէսզի ես կարողանամ կեանքով հրճուել։ Տէր, ատուր ինձ հնարաւորութիւն գղջալու, որ ապէսզի ես ճանաչեմ բաղդը։ Տէր, հաւասարացրու ինձ Եւայի աղջիկներին։»

Էլ անելու լինի նա, այնուամենայնիւ նա չգիտէ չարն ու բարին։ Նրա աղջիկները, որոնք ծագում են խորհրդաւոր ամուսնութիւնից, անմահ են ինչպէս նա, և դարձեալ ագատ են և չեն կարող ոչ բարի գործել և ոչ էլ մեղանչել Աստուծոյ դէմ։ Ահա, զաւակս, հիմա ես գիտեմ, որ քո հոգու անկման մէջ յանցաւոր է կինը—Լէյիլան, որ Լիլիա աղջիկն է։ Աղօթիք։ Վաղը կ'ընդունեմ քո խոստովանանքը։

Մի բոպէ նա մնաց մտազբաղ, ապա գրպանից մի ինչ-որ թուղթ հանելով, շարունակեց։

— Այս գիշեր, երբ մենք բաժանուեցանք, ձեան պատճառով ուշացած նամակաբերը յանձնեց ինձ մի անհանոյ նամակ։ Տեղապահի մեծ փոխանորդն ինձ զրում է, որ իմ գիրքը վատ տպաւորութիւն է թողել խոռվել վեհափառի կուսակրօնական խաղաղութիւնը։ Այդ հեղինակութիւնը (աւետացնում է նա), լիքն է յանդուգն մտքերով

ԲԱՐՈՅԱԿԱՆՈԹԻԻԻՆ

Հնախօս պ. Մազիւրը վերջապէս ստանալով ակադեմիայի նշանը՝ ներողամիամեղմութեամբ էր նայում կառավարութեան վրայ: Եւ որովհետեւ նա միշտ ստիպուած էր բարկանալ ուստի այժմ իր բարկութիւնն ուղղեց դէպի կղերականութիւնը և երկան էր հանում եպիսկոպոսների դաւաճանական ձգտումները: Մի անգամ նա պատահելով պ. Բերժերէին ս. էսկուտերա հրապարակում՝ նախազգուշացրեց կեղերականներից սպասուող վտանգի համար:

—Հոգեսորականները անկարող եղան տապալել հասարակագետութիւնը, ասաց նա, այժմ նրանք ցանկանում են տիրանալ նրան:

—Բոլոր կուսակցութիւնների պատուասիրութիւնը, պատասխանեց Բերժերէն, դէպի այդ է ուղղուած, մեր գեմոկրատիական հիմնարկութիւնների բնական հետևանքը

դրա մէջ է, որովհետեւ գեմոկրատիան իսկապէս կուսակցական կոռուի մէջ է պարփակուած և ինքը՝ ժողովուրդը բաժանուած է զգացմունքներով ու շահերով:

—Սակայն, վրայ բերեց Մազիւրը. բոլորովին անթոյլատրելի է այն, որ կըղերականները ազատութեան դիմակներ են հագնում, որպէսզի խարեն ընտրեալներին: Բերժերէն պատասխանեց.

—Այն բոլոր կուսակցութիւնները, որոնք կառավարութեան կազմից դուքս են մնացած, դէպի ազատութիւն են կոչ կարդում, որովհետեւ վերջինս ոյժ է տալիս օպազօղեցիային և թուլացնում իշխանութեան, ուստի այն կուսակցութիւններն էլ, որոնք պետական կազմի մէջ են, աշխատում են որքան կարելի է, կարձել այդ ազատութիւնը: Եւ նա ժողովրդին նախապատռութիւն տուած լինելու համար հրատարակում է տիրանական օրէնքներ, քանի որ չ'կան այնպիսի օրէնքներ, որոնք կարողանային ա-

պահովել աղատութիւնը ժողովրդի գերիշ-
խանութեան պահանջներից։ Դէմոկրատի-
ական բռնակալութիւնը տեսականապէս ոչ
մի սահման չունի. և իսկապէս, միայն ներ-
կայ ժամանակին նայելով՝ ես կիսուտովան-
եմ, որ նա բաւականին չնչին է։

Մեզ տուին «Անպէտք օրէնքներ»
(Les lois scélérates), որոնք չեն դուծա-
գրւում։

Պարոն Բերժերէ, ասաց հնախօսը,
ուզում էք բարի խորհուրդ լւել, դուք չե՞
որ հասարակապետական էք. միք յարձա-
կուի ձեր բարեկամների վրայ. եթէ մենք
չըզդուշանանք, նորից կընկնենք հոգևորա-
կանների իշխանութեան տակ։ Յետադի-
մութիւնը հսկայական քայլերով յառաջա-
դիմումէ, ինչպէս Նապոլէօնը ասել է. «Սպի-
տակները միշտ սպիտակ են, իսկ կապոյտ-
ներն էլ միշտ կապոյտ»։ Դուք, պարոն
Բերժերէ «կապոյտ» էք։ Կղերական կուսակ-
ցութիւնը ձեզ չի ներիլ, որ դուք ժամնա-

դ՝ Արքին կեղծաւոր անուանեցիք (հէսց ինձ
համար էլ դժուար է ձեզ ներել, քանի որ
ժամանակ Դ' Արքը և Դանտօն իմ աստուած-
ներն են)։ Դուք ազատամիտ մարդ էք,
պաշտպանեցէք մեզ հետ քաղաքացիներին,
միանանք, միայն միացուի՛ը կըտայ մեզ
յաղթելու ոյժ. բարձրագոյն շահերն են մեզ
կանչում կղերականութեան հետ կոռւելու։

— Կուսակցական շահերը ես աւելի գը-
րա մէջ եմ տեսնում, պատասխանեց Բեր-
ժերէն, եթէ ես ստիպուած լինէի կուսակ-
ցութեան մէջ մտնել, այն ժամանակ ես
անպայման կըմիանայի ձեզ, որին կարող
կլինէի ծառայել առանց կեղծիքի։ Բայց
բարերախտաբար ես այդպիսի ծայրահեղու-
թիւնների մէջ չեմ գտնւում և բոլորովին
տրամադրուած չեմ կարճել իմ խելքը և
քաղաքագիտական բաժանմունք մտնել։
Ճիշտն ասած, ես անտարբեր եմ վերաբեր-
ւում դէպի ձեր վիճաբանութիւնները, ո-
րովինետև տեսնում եմ նրանց անօգուտ լի-

Նելը։ Այն ամենը, որ ձեզ բաժանում է կղերականութիւնից, իսկապէս, շատ աննշան է։ Եթէ նրանք խլէին ձեզնից իշխանութիւնը, միւնոյն է, անձնական գոյութեան պայմանները դրանից չէին փոխուի, իսկ պետութեան մէջ միակ նշանաւոր բանը անձնական գոյութեանը պաշտպանելն է։ Կարծիքներ ոչ այլ ինչ են, եթէ ոչ բառախաղը։ Ձեզ բաժանում են կղերականութիւնից միայն կարծիքները։ Դուք չունէք սեփական բարոյականութիւն, որը կարողանայիք հակադնել նրանց բարոյականութեանը, այն պատճառով միայն, որ ֆրանսիայում գոյութիւն չունեն միացած դրութեամբ կրօնական և միւս կողմից քաղաքացիական բարոյականութիւնները և որոնք կարծում են, որ դա կայ, նրանք արտաքինով մոլորուած են։ Ես այս բոպէիս դա կը բացատրեմ ձեզ համառօտակի։

Ամեն ժամանակ լինում են առօրեայ կեանքին վերաբերող այնպիսի դէպքեր, ու-

րոնք որոշում են մարդկանց ընդհանուր մտածողութեան եղանակը։ Մեր բարոյական հասկացողութիւնները մտածմունքից չեն բղխում, այլ բղխում են սովորութիւններից։ Եւ որովհետեւ այդ հասկացողութիւնների իւրացման հետ կապուած են պատուազատումները, իսկ նրանց մերժումից էլ ամօթ ու խայտառակութիւն, ուստի ոչ ոք չի համարձակում նրանց ենթարկել բացարձակ վերաքննութեան։ Նրանք ճանաչում են հասարակութիւնից առանց ստուգելու և անկախ կրօնական համոզումներից ու փիլիսոփական հայեացքներից, և պահպանում են ոչ պակաս հաստատակամութեամբ այնպիսիներից, որոնք մտցնում են այդ կեանքի մէջ, այնպէս և նրանցից, որոնք իրանց վարմունքները չեն հպատակեցնում նրանց։ Վիճում են միայն բարդացած հասկացողութիւնների առաջացման մասին։

Միւնոյն ժամանակ, ինչպէս իրենց ազատամիտ յորջորջող մարդիկ կարծում են,

որ իրենց վարմունքների կանոնները գըտնում են բնութեան մէջ և կամ պատուախընդիր մարդիկ էլ դաւանանքից կանոններ են ստեղծում, որով իրանք ղեկավարում են, պէտք է նկատել, որ թէ մէկի և թէ միւսի ստեղծած կանոնները միատեսակ են՝ զուգադիպութիւններ են փոքրիկ տարբերութիւններով. և այս լինում է ոչ այն պատճառով, որպէսզի նրանք լինէին հանրային և միենոյն ժամանակ աստուածային ու բնութեան օրէնքներով, ինչպէս պնդում են առհասարակ, այլ ընդհակառակը, նրանք ժամանակին և տեղին համապատասխան են, որովհետեւ նրանք առաջանում են նոյն սովորութիւններից ու միենոյն նախապաշարմունքներից: Բոլոր ժամանակաշրջաններում գոյութիւն ունի տիրապետող բարոյականութիւնը, որը չի բղիում ոչ դաւանանքից և ոչ փիլիսոփայութիւնից, այլ ստեղծում է սովորութեամբ, միակ ուժով, որ ընդունակ է մարդկանց միացնել մի զգացմուն-

քով, որովհետեւ այն բոլորը, որը ստեղծում են դատողութիւնները՝ մարդկանց բաժանում են, իսկ մարդկութիւնն էլ գոյութիւն ունի միայն նրա համար, որ չդատէ այն բանի մասին, ինչ որ կարեոր է նրա կեանքին: Բարոյականութիւնը իշխում է այն բոլոր հաւատալիքների վրայ, որոնք գոյութիւն ունեն, մինչդեռ նրան երեք չեն դատում:

Եւ որովհետեւ բարոյականութիւնը հասարակութեան նախապաշարմունքների հիմնաքարն է, ուստի և միենոյն ժամանակ չեն կարող գոյութիւն ունենալ երկու հակառակ, միաժամանակ և միենոյն տեղում բանող բարոյականութիւններ: Ես այս բանը շատ փաստերով կարող եմ բացատրել, բայց ամենից աչքի ընկնողը Յուլիանոս կայսեր օրինակն է, որի հեղինակութիւնները ես մօտ օրերս մասսամբ ուսումնասիրեցի: Այն Յուլիանոսը, որ իր աստուածաների համար այնքան պատերազմներ մղեց, այն Յուլիանոսը, որ արեին էր երկրպա-

գում, զուտ քրիստոնէական համոզմունքներ էր դաւանում, նա զգում էր մարմնական բաւականութիւններից, յարգում էր պասի նշանակութիւնը, որով մարդս աստուածութեան հետ կապ է հաստատում։ Նրանց նման նա ընդունում էր մեղայ կանչելը, հաւատում էր մեղքերի քաւութեան, ստիպում էր ծէսերը կատարել, հաւատում էր մաքրութեան բուռն ցանկութեան, մերժման և աստուածային սիրոյ։

Վերջապէս նրա նոր-կռապաշտութիւնը բարոյական տեսակէտից նման էր նորատի քրիստոնէութեան, ինչպէս եղբայրը եղբօր ի՞նչ կայ այստեղ զարմանալի։ Երկու դաւանութիւնները երկուորեակներ էին ծընուած հոռմից և Արևելքից։ Նրանք երկումն էլ համապատասխան էին մարդկային սովորութեանց ասիական և լատինական աշխարհների միենոյն բնագդներին։ Նրանց հոգիները միատեսակ էին և տարբերում էին միայն անունով ու լեզուով։ ահա

այդ տարբերութիւնը բաւական էր, որ նըրանց դարձնէր իրար մահացու թշնամիներ։ Մարդիկ աւելի յաճախ թշնամանում են խօսքի համար, նրանք աւելի հաճոյքով են սպանում ու սպանւում խօսքի համար։ Պատմաբանները յուզուած հարցնում են հէնց իրենց թէ ի՞նչ առաջ կըդար սկզբնական բաղաքակրթութիւնից, եթէ փիլիսոփայ-կայսրը յաղթելով, իր զգուշութեամբ ու անփոփոխութեամբ ուժեղացնէր Գալէլիացուն։ Թեթև բան չէ պատմութիւն փոխելը։ Ներկայ դէպքում բաւականին պարզ երեսում է որ Յուլիանոսի օրով բազմաստուածութիւնը մօտենալով մասամբ միաստուածութեան զաղափարին ժամանակի ընթացքում նոր ուղղութիւն ստացաւ և քրիստոնէութեան յատուկ կեղապարանք ընդունեց։ Նայեցէք մեծ յեղափոխականներին և ասացէք, կայ արդեօք նրանց մէջ գոնէ մէկը, որ աչքի ընկնէր բարոյական ինքնոյնութեամբ։ Թօքէսպիէրը իրեն դաստի-

արակող հոգեսորականների մասին լաւ դադա-
փար էր կազմել։ Դուք ազատամիտ մարդ
էք պ. Մազիւր և կարծում էք, որ մեր մո-
լորակի վրայ մարդիկ պէտքէ որոնեն ամե-
նամեծ բաղդաւորութիւնը։ Կաթոլիկ Պ.
Դ՛Տերմոնդը հաւատացած է, որ մենք այս-
տեղ՝ երկրի վրայ գտնւում ենք քաւութեան
համար, որպէսզի չարչարանքի միջոցով ձեռք
բերենք յաւիտեանական կեանք։ Եւ չընա-
յած ձեր սկզբունքների հակասութեանը,
համարեա երկուսդ էլ միևնոյն բարոյակա-
նութիւնն ունէք, որովհետև բարոյականու-
թիւնը հիմնական տեսակէտից անկախ է։

—Դուք ծիծաղում էք ամբողջ աշխար-
հի վրայ, ասաց Մազիւրը, և իմ մէջ արթ-
նացնում էք այնպիսի ցանկութիւն, որ ես
ինչպէս մի խանութպան հայհոյեմ։ Կրօնա-
կան գաղափարները, թէկուզ ինքը սատա-
նան նստած լինի նրանց մէջ՝ որոշ չափ ու
սահման ունեն, բարոյական հասկացողու-
թիւնների ձեռք բերելու համար ոչ մի

անուշաղրութեան և առանձին ճիգերի կարիք
չկայ։ Հետեապէս ես կարող եմ պնդել, որ
կայ քրիստոնէական բարոյականութիւն և
որ ես նրան դատապարտում եմ։

—Բայց, սիրելի մարդ, — վրայ բերեց
հեզութեամբ համալսարանի դասախոսը, —
որքան երկիր ու ժամանակաշրջաններ կան,
որոնց միջով անց է կացել քրիստոնէու-
թիւնը, այնքան էլ քրիստոնէական բարոյա-
կանութիւններ գոյութիւն ունին։ Դաւանա-
նքները միշտ այն գոյն են ստանում, որ-
տեղով անց են կենում, ինչպէս այդ լինում
է քամիլիոնների հետ։ Բարոյականութիւնը
ըլոր սերունդների համար մէկ է և նա է
նրանց միացնում, ինչպէս նաև փոխում է
բարքերի ու սովորոյթների հետ համահա-
ւասար ու այնպէս է երեսում, ինչպէս լոյսի
սոուէրը պատի վրայ մեծացած դրու-
թեամբ ընկնելիս։ Այդպիսով այժմեան կա-
թոլիկների բարոյականութիւնը, որը այն-
քան դաղում է ձեզ, շատ նման է ձեր սեպ-

հական բարոյականութեանը, և ընդհակառակը, աչքի ընկելով տարբերւում է նրանից, որը օրինակ՝ յատուկ էր կաթոլիկին լիդայի ժամանակ. ես այլևս չեմ խօսում առաքեալների ժամանակակից քրիստոնեաների մասին: Ամենամանրակրկիտ քըննութեան ժամանակ նրանք պ. Տերմօնդրէին կերևային չափազանց տարօրինակ: Եղէք արդարացի և հնար եղածի չափով մշտածեցէք թէ ինչով է ձեր ազատամիտ մարդկանց բարոյականութիւնը տարբերում այժմեան ազնիւ ժողովրդի բարոյականութիւնից, որը գնում է պատարագի: Նա դաւանում և ընդունում է քաւութիւնը, այնպէս, ինչպէս դուք, երբ ձեր հոգեորականները այն գիտութիւնը մեկնում են ապշեցուցիչ փաստերով: Նա հաւատում է չարչարանքի ողորմածութեանը, որը հաճելի է Աստծուն. բայց տեսել էք արդեօք. որ այդ հաւատացեալները նստէին մեխերի վրայ: Դուք յայտարարեցիք դաւանութեան ազատութիւն,

նրանք ամուսնացան հրէուհիների հետ և նրանք իրենց սկեսուրներին այրելու չեն դատապարտում: Արդեօք ունիք դուք հասկացողութիւններ սեռերի միացման համար. ամուսնութեան, ընտանիքի մասին, որոնց հետ նրանք համաձայն չինէին միայն այն տարբերութեամբ, որ դուք թոյլ էք տալիս ապահարզան, բայց այդ էլ խորհուրդ չեք տալիս: Նրանք կարծում են, որ կին ցանկանալով դու քեզ դժբաղդացնում ես: Սակայն միթէ նրանց կանայքը աւելի քիչ են բաց անում իրանց թերեն ու կրծքերը ձաշի ու երեկոյթների ժամանակ, քան ձերոնք: Միթէ նրանց հագուստները քիչ են ուրուանկարում մարմինները քան ձերը, յիշում են արդեօք այն, որ Տերտուլիանը ասել է այդի կանանց հագուստների մասին: Ծածկում են արդեօք նրանք քողով և պահում են իրենց մազերը: Եւ չէք յարմարւում արդեօք դուք նրանց գործելակերպին: Պահանջում էք արդեօք, որ կանայք ուկլոր

ման գան միայն նրա համար, որովհետև
դուք չեք հաւատում, որ Եհովայի անէծքից
Եւան ծածկուեց թզենու տերեսով։ Որպիսի
գաղափարներ կարողէք քարոզել ընդէմ
այն մարդկանց գաղափարների, որոնք հաւա-
տով են վերաբերում դէպի հայրենիքը, որի
պաշտպանութիւնն են ձեզնից խնդրում,
կարծես թէ ընդունելով որ նրանց հայրե-
նիքը երկնքումը չէ. դարձեալ պէտքէ ա-
սեմ և զինուորական պարտադիր ծառա-
յութեան համար, որը նրանք ընդունում են,
բացի եկեղեցական կարգապահութեան վե-
րաբերեալ մի կէտից, որը և նրանք իրօք
չեն կատարում. ասում եմ և այն պատե-
րազմի մասին, ուր նրանք ձեզ հետ միա-
սին կերթան երբ դուք կցանկանաք, թէ-
պէտ իրանց Աստուած նրանց պատուիրել
է «Մի՛ սպանիր»։ Միթէ դուք միջազգային
և աղատարար մարդիկ էք, որպէսզի նրան-
ցից բաժանուէք այս կենսական հարցերի
մէջ։ Ի՞նչ էք դուք, որ ի՞նչ ունենաբ։ Մին-

չե անգամ մենամարտութիւնը երկու կող-
մերդ էլ ընդունում էք, թէպէտ այդ սովո-
րոյթը դէմ է թէ՛ ձեր և թէ նրանց համո-
զումներին և հաւատացեալներին իրենց քա-
հանաներն ու թագաւորները արգելել են,
իսկ մենամարտութիւնն մասին ունեցած ձեր
համոզումների դէմ նրանք ընդունում են Աս-
տուծոյ միջամտութիւնը, որ կարելի բան
չէ։ Արգեօք միենոյն համոզումներ չունէք
դուք աշխատանքի կազմակերպման, մաս-
նաւոր սեփականութեան, կապիտալի և ներ-
կայիս հասարակութեան տնտեսական կազ-
մակերպման մասին, որի անարդարացու-
թիւնները ընդունում էք միակերպ համ-
բերատարութեամբ, թէպէտ և նրանցից ին-
քներդ էլ վասարում էք։ Միթէ դուք սո-
ցիալիստներ կըդառնաք միայն նրա համար,
որ գործերը ուրիշ կերպարանք ստանան։
Բայց երբ դուք սօցիալիստներ կըդառնաք,
իհարկէ նրանք էլ նոյնը կդառնան։ Երբ հին
ոեժիմը ձեր օգտին է, դուք համաձայնում էք

ցերի համար, որոնք հետաքրքիր են քաղաքագէտ ձևացող մարդկանց համար և դիպչում այն հասարակութեան շահերին, որը իրաւացի կերպով անտարբեր դիրք է բռնել ձեր և նրանց մէջ: Ունենալով համանման աւանդապահութիւն, հաւատալով միենոյն նախապաշտումներին, ընկած լինելով միենոյն խաւարի մէջ դուք միմեանց կուլ էք տալիս ինչպէս խեցգետիններն անում են այդ կողովի մէջ, և երբ նայում ես ձեր գործերի ու մկների պատերազմին, ակամայից մեռնում է այն եռանդը, որ ձգտում էր հասարակական միտքն ազատել եկեղեցական գերիշխանութիւնից:

Նրանց հաւատն այնքան աննշան կերպով է ցոյց տալիս նրանց զգացումները, որ նրանք ոչ պակաս ձեզնից կապուած են այստեղի կեանքի հետ, մինչդեռ նրանք պէտք է այդ արհամարհէին և իրենց ունեցուածքին, որ նրանց ազատութեան դէմ կանգնած է որպէս մի պատուար: Բարքերով նրանք ձեզ նման լինելով, համարեանոյականութեան տէր են, ինչ որ դուք,

Դուք նրանց մեղաղբում էք այն հար-

անհաւասարութիւնների հետ, իսկ ձեր հակառակորդները ըստ արտաքինին և ապաշկարայ կերպով մեծ յեղափոխութեան շաւով են ընթանում, մանաւանդ երբ հարցը վերաբերում է կարողութեան ձեռք բերելուն, որպիսին կարելի լինի ստանալ որևէ է հին կալուածատէրից, որը այդ ձեռք է բերել ազգային կարողութիւնից: Նրանք զիջու մներ են անում և դուք էլ նոյնն էք անում, իսկ դաւանանքը ձեզ մինչեւ անդամ միացնում է:

Վաճառւում է «Հսպերանո» տպարանում
և բոլոր գրավաճառների մօտ:

ԳԻՆՆ Է 10 Կ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0315481

